ԵԴ/1571/01/21
(ՀԿԴ/0017/01/23)

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ԸՆԴԴԱՏՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ԼՈՒԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

11 մարտի 2024 թվական քաղաք Երևան

ՀՀ Վճռաբեկ դատարանի նախագահ Լիլիթ Թադևոսյանս, ՀՀ Վճռաբեկ դատարանի քրեական պալատի նախագահին փոխարինող Արթուր Պողոսյանս, ՀՀ Վճռաբեկ դատարանի հակակոռուպցիոն պալատի նախագահ Արթուր Դավթյանս, ուսումնասիրելով թիվ ԵԴ/1571/01/21 (ՀԿԴ/0017/01/23) քրեական վարույթի ընդդատության հարցը լուծելու համար ՀՀ Վճռաբեկ դատարանի նախագահին ուղարկելու մասին Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանի՝ 2024 թվականի փետրվարի 23-ի որոշումը,

Պ Ա Ր Զ Ե Ց Ի Ն Ք

<u>Վարույթի դատավարական նախապատմությունը.</u>

1. 2021 թվականի նոյեմբերի 16-ին Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանում ստացվել է թիվ 17145716 (ԵԴ/1571/01/21) քրեական գործն ըստ մեղադրանքի՝ Տիգրան Համբարձումի

Պետրոսյանի՝ 2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի (այսուհետ՝ ՀՀ քրեական օրենսգիրք) 178-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով և 325-րդ հոդվածի 1-ին մասով, Արմեն Ռոբերտի Խաչատրյանի՝ ՀՀ քրեական օրենսգրքի 38-178-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով, 190-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով, 325-րդ հոդվածի 2-րդ մասով և Լյովա Ռուբենի Առաքելյանի՝ ՀՀ քրեական օրենսգրքի 38-190-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով, 325-րդ հոդվածի 2-րդ մասով:

2021 թվականի նոյեմբերի 17-ին թիվ ԵԴ/1571/01/21 քրեական գործն ընդունվել է վարույթ և 2021 թվականի դեկտեմբերի 1-ին որոշում է կայացվել դատական քննություն նշանակելու մասին:

Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանը 2023 թվականի փետրվարի 7-ին որոշում է կայացրել քրեական գործն ըստ ընդդատության Հակակոռուպցիոն դատարան ուղարկելու մասին:

1.1. Հակակոռուպցիոն դատարանը 2023 թվականի փետրվարի 16-ին որոշում է կայացրել թիվ ՀԿԴ/0017/01/23 (ԵԴ/1571/01/21) քրեական գործը վարույթ ընդունելու մասին:

2. Հակակոռուպցիոն դատարանը 2024 թվականի փետրվարի 13-ին՝ հիմնական դատալսումների ընթացքում, որոշում է կայացրել թիվ ՀԿԴ/0017/01/23 (ԵԴ/1571/01/21) քրեական գործն ըստ ընդդատության Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարան ուղարկելու մասին:

3. Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանը 2024 թվականի փետրվարի 23-ին որոշում է կայացրել թիվ ՀԿԴ/0017/01/23 (ԵԴ/1571/01/21) քրեական վարույթի ընդդատության հարցը լուծելու համար Վճռաբեկ դատարանի նախագահին դիմելու մասին:

4. Քրեական վարույթը Վճռաբեկ դատարանում ստացվել է 2024 թվականի փետրվարի 28-ին:

<u>Ընդդատության վերաբերյալ հարցը լուծելու համար էական նշանակություն ունեցող փաստական հանգամանքները.</u>

5. Տիգրան Համբարձումի Պետրոսյանը ներգրավվել է որպես մեղադրյալ և նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով և 325-րդ հոդվածի 1-ին մասով՝ հանրորեն վտանգավոր այն արարքների համար, որ *«նա կեղծել և օգտագործել է իրավունք վերապահող փաստաթղթեր ու Արմեն Խաչատրյանի օժանդակությամբ խարդախությամբ հափշտակել է ուրիշի առանձնապես խոշոր չափերով գույքը:*

Այսպես՝ Տիգրան Համբարձումի Պետրոսյանը, տեղեկանալով Ալբերտ Աղանիկի Սարգսյանի կողմից Արմավիրի մարզի Փարաքար համայնքի Իսակ Գասպարյան 30-րդ հասցեում գտնվող «Եռանկյունի» հյուրանոցային համալիրի շենքը վաճառելու մտադրության մասին, խարդախությամբ ուրիշի գույքի առանձնապես խոշոր չափի հափշտակություն կատարելու նախնական դիտավորությամբ, 2016 թվականի մարտին հեռախոսազրույց է ունեցել Ալբերտ Սարգսյանի հետ, նրան հայտնել հյուրանոցային համալիրը հավանելու և այն գնելու ցանկության մասին, որից հետո ձեռք է բերել հանդիպելու, հյուրանոցային համալիրը տեսնելու և այն գնելու մասին պայմանավորվածություն:

2016 թվականի ապրիլի սկզբներին Տիգրան Պետրոսյանը, հանցավոր մտադրությունն իրականացնելու նպատակով, գնացել է Արմավիրի մարզի Փարաքար համայնքի Իսակ Գասպարյանի 30-րդ հասցեում գտնվող «Եռանկյունի» հյուրանոցային համալիր, հանդիպել Ալբերտ Սարգսյանին և նրան մոլորության մեջ գցելու ու բարեխիղճ գնորդի պատրանք ստեղծելու նպատակով ներկայացել է որպես գործարար և գնել վաճառվող հյուրանոցային համալիրը:

Տիգրան Պետրոսյանը, տեղյակ լինելով նաև Ալբերտ Սարգսյանի կողմից պարտքեր ունենալու և ֆինանսական ծանր դրության մեջ գտնվելու հանգամանքի մասին, ազդելով Ալբերտ Սարգսյանի կամքի և գիտակցության վրա, պայմանավորվածություն է ձեռք բերել 700.000 ԱՄՆ դոլարով գնել հյուրանոցային համալիրը՝ առանց դրանում առկա շարժական գույքի:

Միաժամանակ, օգտվելով Ալբերտ Սարգսյանի գույքային ծանր դրության մեջ գտնվելու հիանգամանքից, հասկանալով, որ ձեռք է բերել վերջինի վստահությունը՝

Տիգրան Պետրոսյանին առաջարկել է գումարի մի մասը տալ նախապես, մի մասի դիմաց Ալբերտ Սարգսյանին փոխանցել Երևան քաղաքի Թոթովենցի փողոցի 2/6-րդ հասցեում գտնվող «Հին ֆայտոն» սրճարանի սեփականության իրավունքը, իսկ գումարի մյուս մասը՝ վճարել մի քանի ամիս հետո:

Այնուհետև՝ Տիգրան Պետրոսյանն Ալբերտ Սարգսյանին ուղեկցել և ցուցադրել է Երևան քաղաքի Մոլդովական 41/8-րդ և 41/14-րդ հասցեներում գտնվող, փաստացի այլ անձանց պատկանող անշարժ գույքերը և, դրանք ներկայացնելով որպես իր սեփական գույքեր, Ալբերտ Սարգսյանի մոտ վստահություն ամրապնդելու ու վերոհիշյալ ռեստորանային համալիրն իր առաջարկած պայմանով վաճառելու վճռականություն առաջացնելու նպատակով, առաջարկել է պարտք մնացած գումարի մասով կնքել փոխառության պայմանագիր՝ դրանում որպես գումարի վերադարձման երաշխիք նշելով վերոհիշյալ հասցեների անշարժ գույքերը, որոնց օտարելու վերաբերյալ իրավազորություն ունենալու, իրական պատկանելիության փաստերը խեղաթյուրելու և իր գործողություններին արժանահավատություն հաղորդելու նպատակով՝ Ալբերտ Սարգսյանին է ներկայացրել նաև իրավունք վերապահող ակնհայտ կեղծ երկու լիազորագրեր: Համոզվելով Ալբերտ Սարգսյանի կողմից վերոհիշյալ գույքն իր առաջարկած պայմաններով վաճառելու վճռականության մեջ՝ Տիգրան Պետրոսյանը նախապես այդ մասին տեղյակ է պահել Արմեն Ռոբերտի Խաչատրյանին և առաջարկել, որպեսզի վերջինը հանդես գա առուվաճառաքի պայմանագրի կողմ՝ գնորդ:

Արմեն Խաչատրյանը, չունենալով իսկապես առարկա հանդիսացող գույքի վերաբերյալ որևէ իրական տեղեկատվություն, ֆինանսական միջոցներ, աշխատելով որպես գազալցակայանի լիցքավորող, պատրաստակամություն է հայտնել ուրիշի գույքը խարդախությամբ ձեռքբերմանն օժանդակելու հարցում:

Իր հանցավոր մտադրությունն ավարտին հասցնելու նպատակով, նախապես պլանավորած վերը նկարագրված գործողություններով Ալբերտ Սարգսյանի մոտ ձեռք բերած վստահությունն ամրապնդելու, ինչպես նաև փուժողի կամքի և գիտակցության վրա ազդելու համար վաճառվող գույքի՝ Արմավիրի մարզի

Փարաքար համայնքի Իսակ Գասպարյանի 30-րդ հասցեում գտնվող «Եռանկյունի» հյուրանոցային համալիրի վաճառքի գնից՝ 700.000 ԱՄՆ դոլարից, Տիգրան Պետրոսյանն առձեռն փվել է 37.000 ԱՄՆ դոլար, 53.000 ԱՄՆ դոլար Արմեն Խաչատրյանի անունից վճարել է որպես վաճառվող գույքի գրավադրմամբ Ալբերտ Սարգսյանի կողմից նախկինում ստացած վարկի մարման և արգելանքից ազատման դիմաց, 13.000 ԱՄՆ դոլար՝ որպես գույքի էլեկտրաէներգիայի ծախսի, գույքահարկի և այլ պարտադիր վճարումների գծով առաջացած պարտքի մարում, և ևս 100.000 ԱՄՆ դոլարի դիմաց՝ Ալբերտ Սարգսյանի դստեր հետ 2016 թվականի ապրիլի 21-ին Նոր Նորք նոտարական տարածքում կնքել է Երևան քաղաքի Թոթովենցի փողոցի 2/6-րդ հասցեում գտնվող «Հին ֆայտոն» սրճարանի սեփականության իրավունքի փոխանցման՝ առուվաճառքի պայմանագիր:

Նույն օրը Երևան քաղաքի Նոր Նորք նոտարական գրասենյակում Արմավիրի մարզի Փարաքար համայնքի Իսակ Գասպարյանի 30-րդ հասցեում գտնվող «Եռանկյունի» հյուրանոցային համալիրի առուվաճառքի պայմանագիրը կնքելիս Տիգրան Պետրոսյանն առաջարկել է հարկային պարտավորություններից խուսափելու պատրվակով՝ հյուրանոցային համալիրի պայմանագրում վաճառքի գին սահմանել 58.000.000 ՀՀ դրամ, ինչին ևս Ալբերտ Սարգսյանը համաձայնվել է: Չկասկածելով Տիգրան Պետրոսյանի բարեխիղճ գտնվելու և իրեն մոլորության մեջ գցելու հանգամանքի մասին՝ Ալբերտ Սարգսյանը կնքել է հյուրանոցային համալիրը 58.000.000 ՀՀ դրամով Տիգրան Պետրոսյանի փոխարեն, սակայն վերջինի հորդորով և առջաարկով որպես գնորդ հանդես եկած Արմեն Խաչատրյանին վաճառելու վերաբերյալ պայմանագիր:

Վաճառվող գույքի արժեքից պարտք մնացած 497.000 ԱՄՆ դոլարի մասով ևս նույն օրը՝ 2016 թվականի ապրիլի 21-ին, Նոր Նորք Նոտարական տարածքում Տիգրան Պետրոսյանի և Ալբերտ Սարգսյանի միջև կնքվել է փոխառության պայմանագիր՝ այդ գումարը ձևակերպելով իբրև վերջինի կողմից տրամադրված կանխիկ գումարի պարտք, իսկ որպես դրա վերադարձման երաշխիք՝ Տիգրան Պետրոսյանի առաջարկով նշվել է Ալբերտ Սարգսյանի մինչ այդ ցուցադրած և իբրև

իրեն պատկանող Երևան քաղաքի Մոլդովական 41/8-րդ և 41/14-րդ հասցեների անշարժ գույքերը:

Դրանից հետո Արմեն Խաչատրյանն իր և Ալբերտ Սարգսյանի միջև կնքված առուվաճառքի պայմանագիրը ներկայացնելով ՀՀ ԿԱ ԱԳԿՊԿ՝ գույքի նկատմամբ գրանցել է իր սեփականության իրավունքը և այդ կերպ՝ Արմեն Խաչատրյանի օժանդակությամբ, Տիգրան Պետրոսյանը հափշտակել է Ալբերտ Սարգսյանի առանձնապես խոշոր չափերի գույքը՝ Արմավիրի մարզի Փարաքար համայնքի Իսակ Գասպարյանի 30-րդ հասցեում գտնվող «Եռանկյունի» հյուրանոցային համալիրը՝ վերջինի պատճառելով 238.246.890 ՀՀ դրամին համարժեք 497.000 ԱՄՆ դոլարի գույքային վնաս (...)»[1]*:*

Արմեն Ռոբերտի Խաչատրյանը ներգրավվել է որպես մեղադրյալ և նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 38-178-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով, 190-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով, 325-րդ հոդվածի 2-րդ մասով՝ հանրորեն վտանգավոր այն արարքների համար, որ *«նա օժանդակել է Տիգրան Պետրոսյանին՝ խարդախությամբ հափշտակել ուրիշի առանձնապես խոշոր չափերով գույքը և հատուցապես տեղյակ լինելով նույն գույքի՝ հանցավոր ճանապարհով ձեռք բերված լինելու մասին՝ օրինականացրել է այն:*

Այսպես՝ Տիգրան Համբարձումի Պետրոսյանը, տեղեկանալով Ալբերտ Աղանիկի Սարգսյանի կողմից Արմավիրի մարզի Փարաքար համայնքի Իսակ Գասպարյան 30-րդ հասցեում գտնվող «Եռանկյունի» հյուրանոցային համալիրի անշարժ գույքը վաճառելու մտադրության մասին, խարդախությամբ ուրիշի գույքի առանձնապես խոշոր չափի հափշտակություն կատարելու նախնական դիտավորությամբ, 2016 թվականի մարտին հեռախոսազրույց է ունեցել Ալբերտ Սարգսյանի հետ, նրան հայտնել հյուրանոցային համալիրը հավանելու և այն գնելու ցանկության մասին, որից հետո ձեռք է բերել հանդիպելու, հյուրանոցային համալիրը տեսնելու և այն գնելու մասին պայմանավորվածություն: 2016 թվականի

[1] Տե՛ս քրեական վարույթ, հատոր 13, թերթեր 269-271:

ապրիլի սկզբներին Տիգրան Պետրոսյանը հանցավոր մտադրությունն իրականացնելու նպատակով, գնացել է Արմավիրի մարզի Փարաքար համայնքի Իսակ Գասպարյանի 30-րդ հասցեում գտնվող «Եռանկյունի» հյուրանոցային համալիր, հանդիպել Ալբերտ Սարգսյանին և նրան մոլորության մեջ գցելու ու բարեխիղճ գնորդի պատրանք ստեղծելու նպատակով ներկայացել է որպես գործարար և զննել վաճառվող հյուրանոցային համալիրը:

Տիգրան Պետրոսյանը տեղյակ լինելով նաև Ալբերտ Սարգսյանի կողմից պարտքեր ունենալու և ֆինանսական ծանր դրության մեջ գտնվելու հանգամանքի մասին՝ ազդելով Ալբերտ Սարգսյանի կամքի և գիտակցության վրա՝ պայմանավորվածություն է ձեռք բերել 700.000 ԱՄՆ դոլարով գնել հյուրանոցային համալիրը՝ առանց դրանում առկա շարժական գույքի:

Միաժամանակ, օգտվելով Ալբերտ Սարգսյանի գույքային ծանր դրության մեջ գտնվելու հանգամանքից, հասկանալով, որ ձեռք է բերել վերջինի վստահությունը՝ Տիգրան Պետրոսյանն առաջարկել է գումարի մի մասը տալ նախապես, մի մասի դիմաց Ալբերտ Սարգսյանին փոխանցել Երևան քաղաքի Թոթովենցի փողոցի 2/6-րդ հասցեում գտնվող «Հին ֆայտոն» սրճարանի սեփականության իրավունքը, իսկ գումարի մյուս մասը՝ վճարել մի քանի ամիս հետո:

Այնուհետև՝ Տիգրան Պետրոսյանն Ալբերտ Սարգսյանին ուղեկցել և ցուցադրել է Երևան քաղաքի Մոլդովական 41/8-րդ և 41/14-րդ հասցեներում գտնվող, փաստացի այլ անձանց պատկանող անշարժ գույքերը և, դրանք ներկայացնելով որպես իր սեփական գույքեր, Ալբերտ Սարգսյանի մոտ վստահությունն ամրապնդելու ու վերոհիշյալ ռեստորանային համալիրն իր առաջարկած պայմանով վաճառելու վճռականություն առաջացնելու նպատակով, առաջարկել է պարտք մնացած գումարի մասով կնքել փոխառության պայմանագիր՝ դրանում որպես գումարի վերադարձման երաշխիք՝ նշելով վերոհիշյալ հասցեների անշարժ գույքերը, որոնց օտարելու վերաբերյալ իրավազորություն ունենալու, իրական պատկանելիության փաստերը խեղաթյուրելու և իր գործողությունների արժանահավատություն

հաղորդելու նպատակով՝ Ալբերտ Սարգսյանին է ներկայացվել նաև իրավունք վերապահող ակնհայտ կեղծ երկու լիազորագրեր:

Համոզվելով Ալբերտ Սարգսյանի կողմից վերոհիշյալ գույքն իր առաջարկած պայմաններով վաճառելու վճռականության մեջ՝ Տիգրան Պետրոսյանը նախապես այդ մասին տեղյակ է պահել Արմեն Ռոբերտի Խաչատրյանին և առաջարկել, որպեսզի վերջինը հանդես գա առուվաճառքի պայմանագրի կողմ՝ գնորդ:

Արմեն Խաչատրյանը, չունենալով խնդրո առարկա հանդիսացող գույքի վերաբերյալ որևէ իրական տեղեկատվություն, ֆինանսական միջոցներ, աշխատելով որպես գազալցակայանի լիցքավորող, պատրաստակամություն է հայտնել ուրիշի գույքը խարդախությամբ ձեռքբերմանն օժանդակելու հարցում:

Իր հանցավոր մտադրությունն ավարտին հասցնելու նպատակով, նախապես պլանավորած վերը նկարագրված գործողություններով՝ Ալբերտ Սարգսյանի մոտ ձեռք բերած վստահությունն ամրապնդելու, ինչպես նաև տուժողի կամքի և գիտակցության վրա ազդելու համար վաճառվող գույքի՝ Արմավիրի մարզի Փարաքար համայնքի Իսակ Գասպարյանի 30-րդ հասցեում գտնվող «Եռանկյունի» հյուրանոցային համալիր վաճառքի գնից՝ 700.000 ԱՄՆ դոլարից, Տիգրան Պետրոսյանն առձեռն տվել է 37.000 ԱՄՆ դոլար, 53.000 ԱՄՆ դոլար Արմեն Խաչատրյանի անունից վճարել է որպես վաճառվող գույքի գրավադրմամբ Ալբերտ Սարգսյանի կողմից նախկինում ստացած վարկի մարման և արգելանքից ազատման դիմաց, 13.000 ԱՄՆ դոլար՝ որպես գույքի էլեկտրաէներգիայի ծախսի, հարկի, գույքահարկի և այլ պարտադիր վճարումների գծով առաջացած պարտքի մարում, և ևս 100.000 ԱՄՆ դոլարի դիմաց Ալբերտ Սարգսյանի դստեր հետ 2016 թվականի ապրիլի 21–ին Նոր-Նորք նոտարական տարածքում կնքել է Երևան քաղաքի Թոթովենցի փողոցի 2/6-րդ հասցեում գտնվող «Հին ֆայտոն» սրճարանի սեփականության իրավունքի փոխանցման՝ առուվաճառքի պայմանագիր:

Նույն օրը Երևան քաղաքի Նոր Նորք նոտարական գրասենյակում Արմավիրի մարզի Փարաքար համայնքի Իսակ Գասպարյանի 30-րդ հասցեում գտնվող «Եռանկյունի» հյուրանոցային համալիրի առուվաճառքի պայմանագիրը կնքելիս

Տիգրան Պետրոսյանն առաջարկել է հարկային պարտավորություններից խուսափելու պատրվակով՝ հյուրանոցային համալիրի պայմանագրում վաճառքի գին սահմանել 58.000.000 ՀՀ դրամ, ինչին ևս Ալբերտ Սարգսյանն համաձայնվել է:

Չկասկածելով Տիգրան Պետրոսյանի բարեխիղճ գտնվելու և իրեն մոլորության մեջ գցելու հանգամանքի մասին՝ Ալբերտ Սարգսյանը կնքել է հյուրանոցային համալիրը 58.000.000 ՀՀ դրամով Տիգրան Պետրոսյանի փոխարեն, սակայն վերջինի հորդորով և առաջարկով որպես գնորդ հանդես եկած Արմեն Խաչատրյանին վաճառելու վերաբերյալ պայմանագիր:

Վաճառվող գույքի արժեքից պարտք մնացած 497.000 ԱՄՆ դոլարի մասով ևս նույն օրը՝ 2016 թվականի ապրիլի 21-ին, Նոր Նորք նոտարական տարածքում Տիգրան Պետրոսյանի և Ալբերտ Սարգսյանի միջև կնքվել է փոխառության պայմանագիր՝ այդ գումարը ձևակերպելով իբրև վերջինի կողմից տված կանխիկ գումարի պարտք, իսկ որպես դրա վերադարձնելու երաշխիք՝ Տիգրան Պետրոսյանի առաջարկով նշվել է Ալբերտ Սարգսյանին մինչ այդ ցուցադրած և իբրև իրեն պատկանող Երևան քաղաքի Մոլդովական 41/8-րդ և 41/14-րդ հասցեների անշարժ գույքերը:

Դրանից հետո Արմեն Խաչատրյանն իր և Ալբերտ Սարգսյանի միջև կնքված առուվաճառքի պայմանագիրը ներկայացնելով ՀՀ ԿԱ ԱԳԿՊԿ, գույքի նկատմամբ գրանցել է իր սեփականության իրավունքը՝ այդ կերպ նախապես խուսրանալով և ձեռք բերելով հանցավոր ճանապարհով ձեռք բերված գույքը, օժանդակել է Տիգրան Պետրոսյանի կողմից Ալբերտ Սարգսյանի առանձնապես խոշոր չափերի գույքը՝ Արմավիրի մարզի Փարաքար համայնքի Իսակ Գասպարյանի 30-րդ հասցեում գտնվող «Եռանկյունի» հյուրանոցային համալիրը, հափշտակելու հարցում՝ վերջինին պատճառելով 238.246.890 ՀՀ դրամին համարժեք 497.000 ԱՄՆ դոլարի գույքային վնաս:

Բացի այդ, Արմեն Խաչատրյանը, օժանդակելով Տիգրան Պետրոսյանին առանձնապես խոշոր չափերով գույքը՝ 335.559.000 ՀՀ դրամին համարժեք 700.000 ԱՄՆ դոլար արժողությամբ Արմավիրի մարզի Փարաքար համայնքի Իսակ

Գաապարյան 30-րդ հասցեում գտնվող «Եռանկյունի» հյուրանոցային համալիրը խարդախությամբ հափշտակելու հարցում, այսինքն՝ նախապես տեղյակ լինելով և գիտակցելով գույքի հանցավոր գործունեության արդյունքում ստացված լինելու հանգամանքի մասին, 2016 թվականի սեպտեմբեր ամսին տեղեկանալով նաև Ալբերտ Սարգսյանի կողմից նշված դեպքով իրավապահ մարմիններին հանցագործության մասին հաղորդում ներկայացնելու, ինչպես նաև 2016 թվականի ապրիլի 21-ին կնքված գույքի առուվաճառքի պայմանագիրն անվավեր ճանաչելու պահանջով դատարան հայցադիմում ներկայացնելու հանգամանքների մասին, հետապնդելով հստակ նպատակ, այն է՝ գույքի ծագմանն օրինական տեսք հաղորդելով խեղաթյուրել կամ քողարկել դրա հանցավոր ծագումը, դրանով իսկ օժանդակել նաև Տիգրան Պետրոսյանին՝ իր կատարած հանցանքի համար պատասխանատվությունից խուսափելուն, ինչպես նաև գույքի հանարավոր բռնագանձումը չթույլատրելը, Լյովա Ռուբենի Առաքելյանի հետ, նախնական համաձայնությամբ կազմել են ձևական և իրավունք վերապահող ակնհայտ կեղծ փոխառության պայմանագիր «10.03.2016թ.» թվագրությամբ, որի համաձայն՝ իբրև վերջինը մինչև վերոհիշյալ գույքի առուվաճառքի պայմանագրի կնքումը՝ 2016 թվականի ապրիլի 21-ը, Արմեն Խաչատրյանին է հանձնել 300.000.000 ՀՀ դրամ գումար, որը վերջինը պարտավորվել է վերադարձնել մաս-մաս՝ համաձայն ժամանակացույցի:

Այնուհետև՝ 2016 թվականի դեկտեմբերի 8-ին Արմեն Խաչատրյանը և Լյովա Առաքելյանը նոտարական վավերացմամբ կնքել են անշարժ գույքի գրավի պայմանագիր, որի համաձայն՝ իբրև ի ապահովում «10.03.2016թ.» թվագրությամբ կողմերի միջև կնքված կեղծ փոխառության պայմանագրի՝ փոխառուն՝ Արմեն Խաչատրյանը գրավ է դրել վերոհիշյալ հասցեի անշարժ գույքը: Պայմանագիրը գրանցվել է ՀՀ ԿԱ ԱԳԿՊԿ-ում, իսկ հետագայում փոխառությամբ վերցված 300.000.000 ՀՀ դրամը չվերադարձնելու հիմքով անշարժ գույքի նկատմամբ ծագել է

Լյովա Առաքելյանի սեփականության իրավունքը՝ այդ կերպ Արմեն Խաչատրյանն ավարտին հասցնելով հանցավոր ճանապարհով ստացված գույքի փոխանցումը»[2]:

Լյովա Ռուբենի Առաքելյանը ներգրավվել է որպես մեղադրյալ և նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 38-190-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով, ՀՀ քրեական օրենսգրքի 325-րդ հոդվածի 2-րդ մասով՝ հանրորեն վտանգավոր այն արարքների համար, որ *«նա Արմեն Խաչատրյանի հետ նախնական համաձայնությամբ կեղծել է իրավունք վերապահող փաստաթղթեր և օժանդակել է վերջինին՝ օրինականացնել հանցավոր ճանապարհով ձեռք բերված ուրիշի առնանձնապես խոշոր չափերով գույքը:*

Այսպես՝ Տիգրան Համբարձումի Պետրոսյանը, տեղեկանալով Ալբերտ Աղանիկի Սարգսյանի կողմից Արմավիրի մարզի Փարաքար համայնքի Իսակ Գասպարյան 30-րդ հասցեում գտնվող «Եռանկյունի» հյուրանոցային համալիրի անշարժ գույքը վաճառելու մտադրության մասին, խարդախությամբ ուրիշի գույքի առանձնապես խոշոր չափի հափշտակություն կատարելու նախնական դիտավորությամբ, 2016 թվականի մարտին հեռախոսազրույց է ունեցել Ալբերտ Սարգսյանի հետ, նրան հայտնել հյուրանոցային համալիրը հավանելու և այն գնելու ցանկության մասին, որից հետո ձեռք է բերել հանդիպելու, հյուրանոցային համալիրը տեսնելու և այն գնելու մասին պայմանավորվածություն:

2016 թվականի ապրիլի սկզբներին Տիգրան Պետրոսյանը հանցավոր մտադրությունն իրականացնելու նպատակով, գնացել է Արմավիրի մարզի Փարաքար համայնքի Իսակ Գասպարյանի 30-րդ հասցեում գտնվող «Եռանկյունի» հյուրանոցային համալիր, հանդիպել Ալբերտ Սարգսյանին և նրան մոլորության մեջ գցելու ու բարեխիղճ գնորդի պատրանք ստեղծելու նպատակով ներկայացել է որպես գործարար և գնել վաճառվող հյուրանոցային համալիրը:

Տիգրան Պետրոսյանը, տեղյակ լինելով նաև Ալբերտ Սարգսյանի կողմից պարտքեր ունենալու և ֆինանսական ծանր դրության մեջ գտնվելու հանգամանքի

[2] Տե՛ս քրեական վարույթ, հատոր 13, թերթեր 272-274:

մասին, ազդելով Ալբերտ Սարգսյանի կամքի և գիտակցության վրա՝ պայմանավորվածություն է ձեռք բերել 700.000 ԱՄՆ դոլարով գնել հյուրանոցային համալիրը՝ առանց դրանում առկա շարժական գույքի: Միաժամանակ, օգտվելով Ալբերտ Սարգսյանի՝ գույքային ծանր դրության մեջ գտնվելու հանգամանքից, հասկանալով, որ ձեռք է բերել վերջինի վստահությունը՝ Տիգրան Պետրոսյանն առաջարկել է գումարի մի մասը տալ նախապես, մի մասի դիմաց Ալբերտ Սարգսյանին փոխանցել Երևան քաղաքի Թոթովենցի փողոցի 2/6-րդ հասցեում գտնվող «Հին ֆայտոն» սրճարանի սեփականության իրավունքը, իսկ գումարի մյուս մասը՝ վճարել մի քանի ամիս հետո:

Այնուհետև՝ Տիգրան Պետրոսյանն Ալբերտ Սարգսյանին ուղեկցել և ցուցադրել է Երևան քաղաքի Մոլդովական 41/8-րդ և 41/14-րդ հասցեներում գտնվող, փաստացի այլ անձանց պատկանող անշարժ գույքերը և, դրանք ներկայացնելով որպես իր սեփական գույքեր, Ալբերտ Սարգսյանի մոտ վստահությունն ամրապնդելու ու վերոհիշյալ ռեստորանային համալիրն իր առաջարկած պայմանով վաճառելու վճռականություն առաջացնելու նպատակով, առաջարկել է պարտք մնացած գումարի մասով կնքել փոխառության պայմանագիր՝ դրանում որպես գումարի վերադարձման երաշխիք՝ նշելով վերոհիշյալ հասցեների անշարժ գույքերը, որոնց օտարելու վերաբերյալ իրավազորություն ունենալու, իրական պատկանելիության փաստերը խեղաթյուրելու և իր գործողություններին արժանահավատություն հաղորդելու նպատակով Ալբերտ Սարգսյանին է ներկայացրել նաև իրավունք վերապահող ակնհայտ կեղծ երկու լիազորագրեր:

Համոզվելով Ալբերտ Սարգսյանի կողմից վերոհիշյալ գույքն իր առաջարկած պայմաններով վաճառելու վճռականության մեջ՝ Տիգրան Պետրոսյանը նախապես այդ մասին տեղյակ է պահել Արմեն Ռոբերտի Խաչատրյանին և առաջարկել, որպեսզի վերջինը հանդես գա առուվաճառքի պայմանագրի կողմ՝ գնորդ:

Արմեն Խաչատրյանը, չունենալով խնդրո առարկա հանդիսացող գույքի վերաբերյալ որևէ իրական տեղեկատվություն, ֆինանսական միջոցներ,

աշխատելով որպես գազալցակայանի լիցքավորող, պատրաստականություն է հայտնել ուրիշի գույքը խարդախությամբ ձեռք օժանդակելու հարցում:

Իր հանցավոր մտադրությունն ավարտին հասցնելու նպատակով, նախապես պլանավորած վերը նկարագրված գործողություններով՝ Ալբերտ Սարգսյանի մոտ ձեռք բերած վստահությունը ամրապնդելու, ինչպես նաև տուժողի կամքի և գիտակցության վրա ազդելու համար վաճառվող գույքի՝ Արմավիրի մարզի Փարաքար համայնքի Իսակ Գասպարյանի 30-րդ հասցեում գտնվող «Եռանկյունի» հյուրանոցային համալիրի վաճառքի գնից՝ 700.000 ԱՄՆ դոլարից, Տիգրան Պետրոսյանն առձեռն տվել է 37.000 ԱՄՆ դոլար, 53.000 ԱՄՆ դոլար Արմեն Խաչատրյանի անունից վճարել է որպես վաճառվող գույքի գրավադրմամբ Ալբերտ Սարգսյանի կողմից նախկինում ստացած վարկի մարման և արգելանքից ազատման դիմաց, 13.000 ԱՄՆ դոլար որպես գույքի էլեկտրաէներգիայի ծախսի, գույքահարկի և այլ պարտադիր վճարումների գծով առաջացած պարտքի մարում և ևս 100.000 ԱՄՆ դոլարի դիմաց՝ Ալբերտ Սարգսյանի դստեր հետ 2016 թվականի ապրիլի 21-ին Նոր Նորք նոտարական տարածքում կնքել է Երևան քաղաքի Թոթովենցի փողոցի 2/6-րդ հասցեում գտնվող «Հին ֆայտոն» սրճարանի սեփականության իրավունքի փոխանցման՝ առուվաճառքի պայմանագիր:

Նույն օրը Երևան քաղաքի Նոր Նորք նոտարական գրասենյակում Արմավիրի մարզի Փարաքար համայնքի Իսակ Գասպարյանի 30-րդ հասցեում գտնվող հյուրանոցային համալիրի առուվաճառքի պայմանագիրը կնքելիս Տիգրան Պետրոսյանն առաջարկել է հյուրանոցային համալիրի պայմանագրում վաճառքի գինը հարկային պարտավորություններից խուսափելու պատրվակով սահմանել 58.000.000 ՀՀ դրամ, ինչին ևս Ալբերտ Սարգսյանը համաձայնվել է:

Չկասկածելով Տիգրան Պետրոսյանի բարեխիղճ գտնվելու և իրեն մոլորության մեջ գցելու հանգամանքի մասին՝ Ալբերտ Սարգսյանը կնքել է հյուրանոցային համալիրը 58.000.000 ՀՀ դրամով Տիգրան Պետրոսյանի փոխարեն, սակայն վերջինի հորդորով և առաջարկով հանդես եկած Արմեն Խաչատրյանին վաճառելու վերաբերյալ պայմանագիր:

Վաճառվող գույքի արժեքից պարտք մնացած 497.000 ԱՄՆ դոլարի մասով ևս նույն օրը՝ 2016 թվականի ապրիլի 21-ին, Նոր Նորք նոտարական տարածքում Տիգրան Պետրոսյանի և Ալբերտ Սարգսյանի միջև կնքվել է փոխառության պայմանագիր՝ այդ գումարը ձևակերպելով իբրև վերջինի կողմից տված կանխիկ գումարի պարտք, որպես դրա վերադարձնելու երաշխիք՝ Տիգրան Պետրոսյանի առաջարկով նշվել է Ալբերտ Սարգսյանին մինչ այդ ցուցադրած իբրև իրեն պատկանող Երևան քաղաքի Մոլդովական 41/8-րդ և 41/14-րդ հասցեների անշարժ գույքերը:

Դրանից հետո Արմեն Խաչատրյանն իր և Ալբերտ Սարգսյանի միջև կնքված առուվաճառքի պայմանագիրը ներկայացնելով ՀՀ ԿԱ ԱԳԿՊԿ գույքի նկատմամբ գրանցել է իր սեփականության իրավունքը՝ այդ կերպ նախապես խոստանալով և ձեռք բերելով հանցավոր ճանապարհով ձեռք բերված գույքը, օժանդակել է Տիգրան Պետրոսյանի կողմից Ալբերտ Սարգսյանի առանձնապես խոշոր չափերի գույքը՝ Արմավիրի մարզի Փարաքար համայնքի Իսակ Գասպարյանի 30-րդ հասցեում գտնվող «Եռանկյունի» հյուրանոցային համալիրը հափշտակելու հարցում՝ վերջինին պատճառելով 238.246.890 ՀՀ դրամին համարժեք 497.000 ԱՄՆ դոլարի գույքային վնաս:

Արմեն Խաչատրյանը, օժանդակելով Տիգրան Պետրոսյանին առանձնապես խոշոր չափերով գույքը՝ 335.559.000 ՀՀ դրամին համարժեք 700.000 ԱՄՆ դոլար արժողությամբ Արմավիրի մարզի Փարաքար համայնքի Իսակ Գասպարյան 30-րդ հասցեում գտնվող «Եռանկյունի» հյուրանոցային համալիրը խարդախությամբ հափշտակելու հարցում, այսինքն նախապես տեղյակ լինելով և գիտակցելով գույքի հանցավոր գործունեության արդյունքում ստացված լինելու հանգամանքի մասին, 2016 թվականի սեպտեմբեր ամսին տեղեկանալով նաև Ալբերտ Սարգսյանի կողմից նշված դեպքով իրավապահ մարմիններին հանցագործության մասին հաղորդում ներկայացնելու, ինչպես նաև 2016 թվականի ապրիլի 21-ին կնքված գույքի առուվաճաքի պայմանգիրն անվավեր ճանաչելու պահանջով դատարան հայցադիմում ներկայացնելու հանգամանքների մասին, հետապնդել է հատուկ

նպատակ, այն է՝ գույքի ծագմանն օրինական տեսք հաղորդելով խեղաթյուրել կամ քողարկել դրա հանցավոր ծագումը, դրանով իսկ օժանդակել նաև Տիգրան Պետրոսյանին՝ իր կատարած հանցանքի համար պատասխանատվությունից խուսափելուն, ինչպես նաև գույքի հանարավոր բռնագանձումը չթույլատրելը:

Արմեն Խաչատրյանն իր մուրադրության մասին հայտնել է հեռավոր բարեկամ, նախկինում որպես մանկավարժ, ինչպես նաև քարի քանդակագործ աշխատած Լյովա Ռուբենի Առաքելյանին՝ առաջարկելով կնքել պայմանագրեր այն մասին, թե իբրև վերջինն իրեն փոխառությամբ գումար է տվել վերոհիշյալ գույքը գնելու համար:

Լյովա Առաքելյանը, չունենալով համապատասխան ֆինանսական միջոցներ, համաձայնել է հանցավոր ճանապարհով ձեռք բերված գույքի օրինականացման հարցում օժանդակել Արմեն Խաչատրյանին և պատրաստակամություն է հայտնել կնքել անհրաժեշտ պայմանագրերը:

Դրանից հետո Արմեն Խաչատրյանը և Լյովա Առաքելյանը նախնական համաձայնությամբ կազմել են ձևական և իրավունք վերապահող ակնհայտ կեղծ փոխառության պայմանագիր «10.03.2016թ.» թվագրությամբ, որի համաձայն՝ իբրև Լյովա Առաքելյանը մինչև վերոհիշյալ գույքի առուվաճառքի պայմանագրի կնքումը՝ 2016 թվականի ապրիլի 21-ը, Արմեն Խաչատրյանին է հանձնել 300.000.000 ՀՀ դրամ գումար, որը վերջինը պարտավորվել է վերադարձնել մաս-մաս՝ համաձայն ժամանակացույցի: Այնուհետև՝ 2016 թվականի դեկտեմբերի 8-ին, Արմեն Խաչատրյանը և Լյովա Առաքելյանը նոտարական վավերացմամբ կնքել են անշարժ գույքի գրավի պայմանագիր, որի համաձայն՝ իբրև ի ապահովումն «10.03.2016թ.» թվագրությամբ կողմերի միջև կնքված կեղծ փոխառության պայմանագրի՝ փոխառուն՝ Արմեն Խաչատրյանը գրավ է դրել վերոհիշյալ հասցեի անշարժ գույքը:

Պայմանագիրը գրանցվել է ՀՀ ԿԱ ԱԳԿՊԿ-ում, իսկ հետագայում փոխառությամբ վերցված 300.000.000 ՀՀ դրամը չվերադարձնելու հիմքով անշարժ գույքի նկատմամբ ծագել է Լյովա Առաքելյանի սեփականության իրավունքը՝ արդյունքում վերոհիշյալ ապօրինի գործողություններով Լյովա Առաքելյանն

օժանդակել է Արմեն Խաչատրյանին ավարտին հասցնելով հանցավոր ճանապարհով ստացված գույքի փոխանցումը»[3]:

6. Հակակոռուպցիոն դատարանը 2024 թվականի փետրվարի 13-ի որոշմամբ արձանագրել է հետևյալը. *«(…) ՀՀ քրեական օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին 2024 թվականի հունվարի 16-ին ընդունված և 2024 թվականի փետրվարի 6-ին ուժի մեջ մտած ՀՕ-31-Ն օրենքի համաձայն՝ կոռուպցիոն հանցագործությունների ցանկը նախատեսող հավելված 1-ը խմբագրվել է, որի արդյունքում փողերի լվացումը հանդիսանում է կոռուպցիոն հանցագործություն, եթե կատարվել է իշխանական կամ ծառայողական լիազորությունները կամ դրանցով պայմանավորված ազդեցությունն օգտագործելով: (…)*

Սույն քրեական գործի փաստական հանգամանքներից հետևում է, որ քրեական գործը ՀՀ հակակոռուպցիոն դատարան է փոխանցվել այն պատճառաբանությամբ, որ ամբաստանյալ Արմեն Խաչատրյանին մեղսագրվում է 2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 190-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով, Լյովա Առաքելյանին՝ 2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 38-190-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով նախատեսված ենթադրյալ արարքների կատարում, իսկ 2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 190-րդ հոդվածը՝ նույն օրենսգրքի 6-րդ հավելվածի համաձայն՝ ներառված է կոռուպցիոն հանցագործությունների ցանկում:

Տվյալ դեպքում ամբաստանյալ Արմեն Խաչատրյանին, ի թիվս այլնի՝ նաև մեղադրանք է առաջադրվել 2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 190-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով, իսկ Լյովա Առաքելյանին, ի թիվս այլնի՝ նաև 2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 38-190-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով նախատեսված հանրորեն վտանգավոր արարքների կատարման համար:

---

[3] Տե՛ս քրեական վարույթ, հատոր 13, թերթեր 275-278:

Ինչպես արդեն իսկ նշվել է 2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 190-րդ հոդվածը համապատասխանում է գործող ՀՀ քրեական օրենսգրքի 296-րդ հոդվածին: Մինչև 2024 թվականի փետրվարի 6-ը՝ նշված հանցակազմը պարունակող հոդվածն ինչպես նախկին, այնպես էլ գործող ՀՀ քրեական օրենսգրքերով, առանց որևէ բացառության, նախատեսված է եղել կոռուպցիոն հանցագործությունների ցանկերում (...):

2024 թվականի փետրվարի 6-ին ուժի մեջ մտած փոփոխություններով ստացվել է այնպես, որ փողերի լվացումն ինքնին կոռուպցիոն հանցագործություն չէ, այլ հանդիսանում է այդպիսին բացառապես, եթե կատարվել է իշխանական կամ ծառայողական լիազորությունները կամ դրանցով պայմանավորված ազդեցությունն օգտագործելով:

Միաժամանակ, Դատարանը հարկ է համարում արձանագրել, որ ՀՀ քրեական օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին 2024 թվականի հունվարի 16-ին ընդունված և 2024 թվականի փետրվարի 6-ին ուժի մեջ մտած ՀՕ-31-Ն օրենքը չի նախատեսել որևէ անցումային դրույթ կամ մինչ նշված փոփոխությունը քննվող քրեական գործերի մասին հիշատակում: Նշվածից ակնհայտ է, որ փոփոխությունը վերաբերելի է բոլոր քրեական գործերին՝ անկախ դրանց քննության փուլից:

Հարկ է արձանագրել, որ ինչպես Արմեն Խաչատրյանը, այնպես էլ Լյովա Առաքելյանը մեղսագրվող ենթադրյալ արարքները չեն կատարել իշխանական կամ ծառայողական լիազորությունները կամ դրանցով պայմանավորված ազդեցությունն օգտագործելով: Ավելին՝ այդ մասին որևէ նշում առկա չէ ոչ նրանց մեղադրյալ ներգրավելու մասին որոշումներում և ոչ էլ մեղադրական եզրակացությունում, ինչի մասին հավաստեց նաև մեղադրողը:

(...)

Հետևաբար՝ թիվ ՀԿԴ/0017/01/23 քրեական գործով ամբաստանյալներից որևէ մեկը ենթադրյալ արարքը չի կատարել իշխանական կամ ծառայողական լիազորությունները կամ դրանցով պայմանավորված ազդեցությունն

օգտագործելով, ուստի բացակայում է մեղսագրվող հանցակազմը կոռուպցիոն բնույթի հանցագործություն դարձնող հանգամանքը, ինչը ենթադրում է, որ քրեական գործն այլևս ընդդատյա չէ ՀՀ հակակոռուպցիոն դատարանին:

Դատարանը նշվածը գնահատելիս հաշվի է առնում նաև այն, որ 2024 թվականի փետրվարի 13-ի դատական նիստի ընթացքում սույն գործով դատավարության բոլոր մասնակիցները միաձայն առարկել են գործի քննությունը ՀՀ հակակոռուպցիոն դատարանում շարունակելու հնարավորության դեմ և նշել են, որ քրեական գործն ընդդատյա է Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանին՝ միջնորդելով քրեական գործն ուղարկել ըստ ընդդատության:

Հարկ է նշել, որ սույն դեպքում օրենսդիրը սահմանել է, որ այն դեպքերում, երբ ընդդատության կարգի խախտումը հայտնաբերվում է դատական քննության ժամանակ, ապա կողմերի համաձայնությամբ դատարանն իրավասու է գործը թողնել իր վարույթում: Կողմերից մեկի առարկության դեպքում գործի կատարված դատական քննությունը չեղյալ է համարվում, և գործն ուղարկվում է ըստ ընդդատության:

Միևնույն ժամանակ, Դատարանն արձանագրում է, որ պատշաճ ընդդատությունը հանդիսանում է արդար դատաքննության իրավունքի կարևորագույն բաղադրատարր, ուստի ոչ ոքի չի կարելի զրկել իր գործն այն դատարանում և այն դատավորի կողմից քննելու իրավունքից, որոնց ընդդատությանն այն վերապահված է օրենքով:

Հետևաբար՝ հաշվի առնելով այն, որ ՀՀ քրեական օրենսգրքում տեղի են ունեցել որոշակի փոփոխություններ, որի ուժով ՀՀ քրեական օրենսգրքի 296-րդ հոդվածով նախատեսված արարքը, առանց իշխանական կամ ծառայողական լիազորությունները կամ դրանցով պայմանավորված ազդեցությունն օգտագործելու, կոռուպցիոն բնույթի հանցագործություն չի համարվում, միևնույն ժամանակ, նկատի ունենալով այն, որ սույն գործով դատավարության բոլոր մասնակիցներն առարկել են գործի քննությունը ՀՀ հակակոռուպցիոն դատարանում շարունակելու

հնարավորության դեմ, իսկ թիվ ՀԿԴ/0017/01/23 քրեական գործով ամբաստանյալիներին մեղսագրվող արարքներն այլևս կոռուպցիոն հանցագործություններ չեն հանդիսանում, արդյունքում՝ քրեական գործը չի հանդիսանում կոռուպցիոն բնույթի՝ Դատարանը գտնում է, որ քրեական գործն ընդդատյա չէ ՀՀ հակակոռուպցիոն դատարանին:

Այսպիսով՝ Դատարանը գտնում է, որ թիվ ՀԿԴ/0017/01/23 քրեական գործը պետք է ուղարկել ըստ ընդդատության՝ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարան (...)»[4]*:*

7. Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանը 2024 թվականի փետրվարի 23-ի որոշմամբ արձանագրել է հետևյալը. *«(...) Դատարանը փաստում է, որ ՀՀ Հակակոռուպցիոն դատարանը գործն ըստ առարկայական ընդդատության ուղարկելու մասին որոշում չէր կարող կայացնել այն պատճառաբանությամբ, որ ընդդատության կանոնների պահպանմամբ վարույթ ընդունված քրեական գործի (...) ընդդատությունը չի կարող փոխվել՝ ելնելով քրեական վարույթի ընթացքում հետագա օրենսդրական փոփոխություններից: Այսինքն՝ Դատարանը գտնում է, որ գործի քննության ընթացքում քրեական օրենսգրքի համապատասխան հավելվածում փոփոխությունների դեպքում վարույթները չպետք է փոխանցեն ըստ ընդդատության, քանի որ դրանք դատարանի կողմից ստանալու պահին եղել են ճիշտ ընտրված ընդդատությամբ, և կանխավարկածը պետք է լինի գործի քննության շարունակությունը տվյալ դատարանում, այլ ոչ թե այն ըստ ընդդատության փոխանցելը:*

Դատարանի նման դիրքորոշումը պայմանավորված է մասնավորապես այն հանգամանքով, որ ինչպես նախկին, այնպես էլ գործող քրեական դատավարության օրենսգրքերի՝ առարկայական ընդդատությամբ գործն այլ դատարան ուղարկելու հնարավորություն նախատեսող կարգավորումները չեն

[4] Տե՛ս քրեական վարույթ, հատոր 15, թերթեր 192-206:

վերաբերում այն դեպքերին, երբ պատշաճ ընթացակարգերի շրջանակներում դատարանը գտել է, որ վարույթն ընդդատյա է տվյալ դատարանին: Այսպես.

ՀՀ նախկին քրեական դատավարության օրենսգրքի 49-րդ հոդվածի համաձայն՝

1. Դատարանը, պարզելով, որ սույն գործն ընդդատյա չէ իրեն, այն ուղարկում է ըստ ընդդատության:

2. Եթե սույն օրենսգրքի 44, 47 կամ 48 հոդվածով նախատեսված ընդդատության կարգի խախտումը հայտնաբերվում է դատական քննության ժամանակ, ապա կողմերի համաձայնությամբ դատարանն իրավասու է գործը թողնել իր վարույթում: Կողմերից մեկի առարկության դեպքում գործի կատարված դատական քննությունը չեղյալ է համարվում, և գործն ուղարկվում է ըստ ընդդատության: Բոլոր դեպքերում կոռուպցիոն հանցագործությունների վերաբերյալ գործերը փոխանցվում են հակակոռուպցիոն դատարան:

Նշված նորմի վերլուծությունից ակնհայտ է, որ հոդվածի 1-ին մասի կարգավորումը վերաբերում է նոր ստացված քրեական գործերին, իսկ 2-րդ մասի կարգավորումը վերաբերում է, ոչ թե դատաքննության ընթացքում օրենսդրական նորմի փոփոխության հիմքով ընդդատությունը փոխելուն, այլ եթե պարզվում է, որ գործը վարույթ է ընդունվել ընդդատության կարգի խախտմամբ: Դատարանի գնահատմամբ՝ հենց այդ նպատակով է օրենսդիրն օգտագործել «դատական քննությունը չեղյալ է համարվում» ձևակերպումը:

ՀՀ գործող քրեական դատավարության օրենսգրքի 263-րդ հոդվածի համաձայն՝

1. Նախնական դատաքննության ընթացքում պարզելով, որ տվյալ վարույթն ընդդատյա չէ իրեն, դատարանն այն որոշմամբ անհապաղ փոխանցում է ըստ ընդդատության:

2. Եթե հիմնական դատաքննության ընթացքում ի հայտ են գալիս այնպիսի փաստեր, որոնց հիման վրա վարույթը ենթակա է փոխանցման ըստ ընդդատության, ապա կողմերի համաձայնությամբ դատարանը շարունակում է

վարույթը: Կողմերից մեկի առարկության դեպքում վարույթը որոշմամբ փոխանցվում է ըստ ընդդատության:

Նշված նորմի վերլուծությունից ակնհայտ է, որ հոդվածի 1-ին մասը վերաբերում է նախնական դատաքննությունների փուլում այն դեպքերին, երբ դատարանը 1-ին անգամ քննարկում է քրեական վարույթի ընդդատության հարցը: Իսկ այն դեպքերում, երբ դատարանն արդեն իսկ արձանագրել է, որ վարույթն ընդդատյա է տվյալ դատարանին, կարող է վարույթն ըստ ընդդատության փոխանցել միայն նույն հոդվածի 2-րդ մասով նախատեսված դեպքում, այն է՝ եթե հիմնական դատաքննությունների ընթացքում ի հայտ են գալիս այնպիսի փաստեր, որոնց հիման վրա վարույթը ենթակա է փոխանցման ըստ ընդդատության:

Դատարանի գնահատմամբ՝ օրենսդրի նման ձևակերպումից ակնհայտ է դառնում, որ նշված կարգավորումը որևէ կերպ չի կարող վերաբերելի լինել այն դեպքերին, երբ քրեական օրենսգրքի համապատասխան հավելվածում փոփոխություն է կատարվում: Դատարանի գնահատմամբ՝ օրենսդիրը հատուկ է շեշտադրել «հիմնական դատաքննությունների ընթացքում» և «փաստեր» ձևակերպումները, որով ցույց է տվել, որ միայն հիմնական դատաքննությունների ընթացքում՝ որպես կանոն ապացույցների հետազոտման արդյունքում կարող են ի հայտ գալ փաստեր, որ տվյալ քրեական վարույթն ընդդատյա է այլ դատարանին (օրինակ՝ ապացույցի հետազոտման արդյունքում պարզվում է, որ արարքն այլ դատարանի տարածքում է ավարտվել):

Դատարանի գնահատմամբ՝ օրենսդիրը փաստերի ի հայտ գալն ի նկատի չի ունեցել օրենսդրական փոփոխությունը, այլապես նման կարգավորում կնախատեսեր նաև լրացուցիչ դատաքննությունների փուլի կամ դատավճիռ կայացնելու համար առանձին սենյակում գտնվելու ընթացքի համար, քանի որ նման օրենսդրական փոփոխություն կարող է կատարվել նաև նշված փուլերում:

Ընդ որում, Դատարանը գտնում է, որ օրենսդրի նշված մոտեցումը տրամաբանական է և պայմանավորված է հետևյալ հանգամանքներով՝

ա. Ընդդատության կանոնները պետք է զերծ պահեն անձին դատական շրջապտույտից՝ նպաստելով գործի քննության ողջամիտ ժամկետների պահպանմանը և արդյունավետ արդարադատության իրականացմանը:

բ. Գործի ընդդատությունը որոշելը, որպես դատավարական գործողություն, որոշվում է այդ գործը ստանալու պահին գործող օրենսգրքի նորմերին համապատասխան և դատավարական նորմի հետադարձության կանոն այդ մասով նախատեսված չէ:

գ. Քրեական օրենսգրքի հավելվածի փոփոխությունը համարվում է քրեական օրենքի փոփոխություն, որի վրա լիարժեքորեն տարածվում են քրեական օրենքի հետադարձության կանոնները սահմանող նորմի կարգավորումները: Այս դեպքում հարկ է արձանագրել, որ կոռուպցիոն հանցագործությունները սահմանող հավելվածի փոփոխությունը ո՛չ մեղմացնող, ո՛չ խստացնող օրենք է, հետևաբար դրա կիրառությունը հետադարձ կարգով անթույլատրելի է, եթե չկա համապատասխան անցումային դրույթ ընդունված օրենքում: Այլ կերպ՝ քրեական օրենքի փոփոխությունը, որով չի բարելավվում անձի վիճակը, տարածվում է այն ուժի մեջ մտնելուց հետո ծագած իրավահարաբերությունների վրա:

դ. ՀՀ քրեական օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» 2024 թվականի հունվարի 16-ին ընդունված և 2024 թվականի փետրվարի 6-ին ուժի մեջ մտած ՀՕ-31-Ն ՀՀ օրենքը չի նախատեսում անցումային դրույթ, ըստ որի դատարանների վարույթում գտնվող նախկին կոռուպցիոն բնույթի հանցագործությունների վերաբերյալ վարույթները պետք է փոխանցվեն ըստ ընդդատության: Դատարանն ընդգծում է, որ ի տարբերություն օրենսդրության փոփոխության նախկին դեպքերի, երբ օրենսդիրն անցումային դրույթի ուժով կարգավորել էր գործերի փոխանցումը ՀՀ հակակոռուպցիոն դատարան, այս դեպքում նման նորմ չի նախատեսել, ինչը հիմք է տալիս գալ հիմնավոր այն եզրահանգման, որ օրենսդրի կամքն եղել է հիշյալ քրեական վարույթների քննությունը գործը ստացած դատարանում մնալը: Հակառակ դեպքում հնարավոր է ստեղծվի մի իրավիճակ, երբ տարբեր ժամանակներում իրականացված

օրենսդրական փոփոխությունների արդյունքում քրեական գործը կհայտնվի անվերջ «շրջապտույտի» մեջ: Օրինակ՝ դատարանում ավարտական փուլում (դատական վիճաբանություններ կամ եզրափակիչ ելույթներ) գտնվող քրեական գործը զուտ օրենսդրական փոփոխություններից ելնելով առարկայական ընդդատությամբ ուղարկվի այլ դատարան, իսկ որոշ ժամանակ անց՝ նույն հիմնավորումներով վերադարձվի այն ուղարկած դատարան:

Հիմք ընդունելով վերը նշվածը՝ Դատարանը վերահաստատում է իր մոտեցումը, որ առարկայական ընդդատության ենթակա գործերի ցանկում փոփոխության դեպքում գործում է ճիշտ ընդդատությամբ գործը սկզբում դատարանի կողմից գործի քննությունը շարունակելու կանխավարկածը, եթե այլ բան նախատեսված չէ ընդունված նոր օրենքով:

Ավելին՝

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 483-րդ հոդվածի 23-րդ մասի համաձայն՝ սույն օրենսգրքի 260-րդ հոդվածի 1-ին մասի՝ Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի նախատեսված կոռուպցիոն հանցանքների վերաբերյալ վարույթների բացառության մասով, 261-րդ հոդվածի 7-րդ մասի և 262-րդ հոդվածի 2-րդ մասի ուժի մեջ մտնելով պայմանավորված՝ Հայաստանի Հանրապետության առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանների վարույթում գտնվող կոռուպցիոն հանցանքների վերաբերյալ գործերի (վարույթների) վերաբաշխումն իրականացվում է ««Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» 2021 թվականի ապրիլի 14-ի ՀՕ-331-Ն սահմանադրական օրենքի 19-րդ հոդվածով սահմանված կարգով և դեպքերում:

««Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» 2021 թվականի ապրիլի 14-ի ՀՕ-331-Ն սահմանադրական օրենքի անցումային դրույթները սահմանող 19-րդ հոդվածի 24-րդ մասը սահմանում է. «Հայաստանի

Հանրապետության առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանների վարույթում գտնվող՝ սույն մասով նախատեսված գործերը ենթակա չեն վերաբաշխման հակակոռուպցիոն դատարանին, եթե փվյալ գործով անցում է կատարվել դատաքննության փուլ:»:

Դատարանն արձանագրում է, որ թեև մեջբերված հոդվածների վերլուծությունից ակնհայտ է, որ դրանք վերաբերում են առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանների վարույթում գտնվող կոռուպցիոն բնույթի քրեական գործերի վերաբաշխմանը, սակայն ուշադրության է արժանի այն հանգամանքը, որ օրենքը հստակ սահմանել է, որ այն քրեական գործերը, որոնցով անցում է կատարվել դատաքննության փուլ, ենթակա չէ վերաբաշխման: Նույն տրամաբանությամբ, հակակոռուպցիոն դատարանում գտնվող քրեական գործերը, որոնցում անցում է կատարվել դատաքննության փուլ չի կարող վերաբաշխվել և փոխանցվել առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը:

(...) Դատարանը փաստում է, որ թիվ ՀԿԴ/0017/01/23 քրեական գործով ՀՀ հակակոռուպցիոն դատարանը անցում է կատարել դատաքննության փուլ (...), և ՀՀ նախկին քրեական դատավարության օրենսգրքով առաջնորդված լինելու դեպքում ՀՀ հակակոռուպցիոն դատարանը չի հիմնավորել, որ նախկինում ընդդատության կարգի խախտմամբ է գործը վարույթ ընդունել, իսկ ՀՀ գործող քրեական դատավարության օրենսգրքով առաջնորդվելու դեպքում չի հիմնավորել, որ հիմնական դատաքննությունների ընթացքում ի հայտ են գալիս այնպիսի փաստեր (ինչպես արդեն հիմնավորվել է՝ քրեական վարույթի ընթացքում հետագա օրենսդրական փոփոխությունները չեն կարող նշված նորմի իմաստով համարվել ընդդատությունը փոխելու համար հիմք հանդիսացող փաստի ի հայտ գալ), որոնց հիման վրա վարույթը ենթակա է փոխանցման ըստ ընդդատության:

Հետևաբար, Դատարանը գտնում է, որ առարկայական ընդդատության կանոններով քրեական գործը ՀՀ հակակոռուպցիոն դատարանը չէր կարող

փոխանցել առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարան (…)»[5]:

Սույն որոշման հիմնավորումները և եզրահանգումը.

8. Սույն վարույթով բարձրացված իրավական հարցը հետևյալն է. հիմնավո՞ր է արդյոք Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանի հետևությունն այն մասին, որ թիվ ԵԴ/1571/01/21 (ՀԿԴ/0017/01/23) քրեական վարույթը ենթակա չէր փոխանցման առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան:

9. ՀՀ Սահմանադրության 63-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «*Յուրաքանչյուր ոք ունի անկախ և անաչառ դատարանի կողմից իր գործի արդարացի, հրապարակային և ողջամիտ ժամկետում քննության իրավունք*»:

10. «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Յուրաքանչյուր ոք, (…) նրան ներկայացված ցանկացած քրեական մեղադրանքի առնչությամբ, ունի օրենքի հիման վրա ստեղծված անկախ ու անաչառ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում արդարացի և հրապարակային դատաքննության իրավունք*»:

10.1. Մարդու իրավունքների եվրոպական դատարանը, *«օրենքի հիման վրա ստեղծված դատարան»* հասկացությունը մեկնաբանելիս նշել է. *«Այն երկրներում, որտեղ օրենքը կոդիֆիկացված է, դատական համակարգի կազմակերպումը չի կարող թողնվել դատական մարմինների հայեցողությանը, սակայն դա չի նշանակում, որ դատարաններն օժտված չեն համապատասխան ազգային օրենսդրությունը մեկնաբանելու որոշակի ազատությամբ»*[6]:

---

[5] Տե՛ս քրեական վարույթ, հատոր 16, թերթեր 3-16:

[6] Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Gorgiladze v. Georgia* գործով 2009 թվականի հոկտեմբերի 20-ի վճիռը, գանգատ թիվ 4313/03, 69-րդ կետ:

Միևնույն ժամանակ, դատական մատչելիության իրավունքի համատեքստում Մարդու իրավունքների եվրոպական դատարանը նշել է, որ. *«Ներպետական դատական ատյանները դատավարական կանոնները կիրառելիս պետք է ձեռնպահ մնան դրանց չափազանցված ձևականացումից, որն իր ազդեցությունը կունենա դատավարության արդարացիության վրա»*[7]*:*

11. Վճռաբեկ դատարանը *Գևորգ Հարությունյանի* գործով իրավական դիրքորոշում է ձևավորել այն մասին, որ. «*(…) Գործերի պատշաճ ընդդատությունը, որպես արդար դատաքննության անհրաժեշտ բաղկացուցիչ, հիմնարար իրավական արժեք է: Դրա հիմնարար բնույթը բխում է արդար դատաքննության ինստիտուցիոնալ տարրից՝ անկախ, անկողմնակալ, իրավասու և օրենքի հիման վրա ստեղծված դատարան ապահովելու պետության պոզիտիվ պարտականությունից: Իսկ այդ պարտականությունն իր հերթին, ըստ էության, ամրագրված է Հայաստանի Հանրապետության իրավական համակարգում բարձրագույն իրավաբանական ուժ ունեցող այնպիսի նորմատիվ ակտերում, ինչպիսիք են ՀՀ Սահմանադրությունը (…), Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագիրը (14-րդ հոդված) և «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիան (6-րդ հոդված): (…)*

Պատշաճ ընդդատության հիմնարար իրավական նշանակությունն այն է, որ յուրաքանչյուր կոնկրետ քրեական գործը քննող դատարանի որոշման հստակ կանոնների առկայությունը և դրանց կանխատեսելի գործադրումն անհրաժեշտ պայման են կողմնակի դիտորդի մոտ այնպիսի համոզմունք ձևավորելու համար, որ տվյալ կոնկրետ քրեական գործը քննող դատարանը և դատավորը նախապաշարմունքվածություն չունեն, և տվյալ գործը վարույթ ընդունելիս սուբյեկտիվիզմն ու կամայականությունը բացառված են եղել:

---

[7] Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Walchli v. France* գործով 2007 թվականի հուլիսի 26-ի վճիռը, գանգատ թիվ 35787/03, 29-րդ կետ:

Այսպիսով, քրեական գործերի ընդդատության որոշման հստակ, կամայականությունը բացառող կանոնների առկայությունը և գործադրումը պարտադիր նախապայման են արդարադատության մատչելիության պատշաճ երաշխավորման համար (…)»[8]:

12. Վերոգրյալից հետևում է, որ ընդդատության կանոններն այն չափանիշներն են, որոնց հիման վրա որոշվում է, թե տվյալ գործով որ դատարանը պետք է իրականացնի արդարադատություն: Ընդդատության կանոնները կոչված են անձին զերծ պահելու դատական շրջապտույտից, որը կարող է առաջանալ, եթե դատարանները հրաժարվեն գործը վարույթ ընդունել՝ իրենց ընդդատյա չլինելու պատճառաբանությամբ:

Ընդդատության ինստիտուտը հիմնարար նշանակություն ունեցող արժեք է, քանի որ այն անմիջականորեն կապված է անձի՝ օրենքի հիման վրա ստեղծված դատարանի կողմից իր գործի քննության իրավունքի հետ: Քրեական վարույթի մասնակիցների համար պետք է կանխատեսելի լինի, թե իրենց գործով որ դատարանը պետք է իրականացնի արդարադատություն:

Անհրաժեշտ է ընդգծել, որ վարույթն ըստ ընդդատության փոխանցելիս, չպետք է դրսևորվի չափազանց ձևական մոտեցում, և պետք է հաշվի առնվի նաև արդարադատության շահը:

13. 1998 թվականի հուլիսի 1-ին ընդունված ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 44-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «*Առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանները քննում են բոլոր քրեական գործերը, բացառությամբ հակակոռուպցիոն դատարանին ընդդատյա գործերի, քրեադատավարական օրենսդրությամբ նախատեսված այլ գործեր (նյութեր), ինչպես նաև վերահսկողություն են իրականացնում քրեական գործի մինչդատական վարույթի նկատմամբ»*:

---

[8] Տե՛ս Վճռաբեկ դատարանի՝ *Գևորգ Հարությունյանի* գործով 2011 թվականի հուլիսի 13-ի թիվ ԵԿԴ/0211/01/10 որոշումը, կետեր 15-16:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 260-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Մարզերի առաջին ատյանի ընդհանուր իրավասության և Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարաններին (այսուհետ՝ առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան) ընդդատյա են առաջին ատյանի կարգով իրականացվող բոլոր վարույթները, բացառությամբ Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի հավելված N 1-ով նախատեսված կոռուպցիոն հանցանքների վերաբերյալ վարույթների, որոնք ընդդատյա են հակակոռուպցիոն դատարանին»:*

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 263-րդ հոդվածի համաձայն՝ *«1.Նախնական դատաքննության ընթացքում պարզելով, որ տվյալ վարույթն ընդդատյա չէ իրեն, դատարանն այդ որոշմամբ անհապաղ փոխանցում է ըստ ընդդատության:*

(…)

5. Վարույթն ըստ ընդդատության ստացած հակակոռուպցիոն կամ առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը մինչև նախնական դատաքննություն նշանակելը եռօրյա ժամկետում որոշում է կայացնում վարույթը Վճռաբեկ դատարան ուղարկելու մասին, եթե համաձայն չէ դրա առարկայական ընդդատությանը:

(…)

8. Սույն հոդվածի 5-րդ մասով նախատեսված դեպքում Վճռաբեկ դատարանի նախագահը, Վճռաբեկ դատարանի քրեական և հակակոռուպցիոն պալատների նախագահները վարույթը Վճռաբեկ դատարանում ստանալու պահից տասնօրյա ժամկետում վերջնականապես լուծում են վարույթի առարկայական ընդդատության հարցը՝ ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ ընդունված որոշմամբ: Քվեարկելիս ձեռնպահ մնալ չի թույլատրվում:

9. Սույն հոդվածով սահմանված կարգով որոշված դատարանը համարվում է իրավասու դատարան»:

13.1. «ՀՀ քրեական օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» 2024 թվականի հունվարի 16-ի թիվ ՀՕ-31-Ն ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի համաձայն՝ *«Օրենսգրքի հավելված N 1-ում՝*

*1) **«Հոդված 296. Փողերի լվացումը»** բառերը փոխարինել **«Հոդված 296. 3-րդ մաս, 2-րդ կետ. Փողերի լվացումը՝** իշխանական կամ ծառայողական լիազորությունները կամ դրանցով պայմանավորված ազդեցությունն օգտագործելով» բառերով (…)»:*

13.2. «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՕ-331-Ն ՀՀ սահմանադրական օրենքի 19-րդ հոդվածի 23-րդ և 24-րդ մասերի համաձայն՝ *«23. (…) Հայաստանի Հանրապետության առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարաններին ենթակա (…) կոռուպցիոն հանցագործությունների վերաբերյալ գործերը վերաբաշխվում են հակակոռուպցիոն դատարանի համապատասխան մասնագիտացում ունեցող դատավորների միջև, բացառությամբ սույն հոդվածի 24-րդ մասով սահմանված դեպքի:*

24. Հայաստանի Հանրապետության առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանների վարույթում գտնվող՝ սույն մասով նախատեսված գործերը ենթակա չեն վերաբաշխման հակակոռուպցիոն դատարանին, եթե տվյալ գործով անցում է կատարվել դատաքննության փուլ»:

«Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 2021 թվականի ապրիլի 14-ին ընդունված ՀՕ-333-Ն օրենքի 7-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ *«Սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո Հայաստանի Հանրապետության առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանների վարույթում գտնվող կոռուպցիոն հանցագործությունների վերաբերյալ գործերը վերաբաշխվում են հակակոռուպցիոն դատարանի դատավորների միջև, եթե տվյալ գործերով անցում չի կատարվել դատաքննության փուլ»:*

13.3. «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 39-րդ հոդվածի համաձայն՝ *«1. Եթե օրենսդրության մեջ բացակայում է կոնկրետ հասարակական հարաբերությունը կարգավորող իրավական նորմը, սակայն օրենսդրությամբ սահմանված է համանման հարաբերությունները կարգավորող այլ իրավական նորմ, ապա այդպիսի հարաբերությունների նկատմամբ (եթե դա չի հակասում դրանց էությանը) կիրառվում են համանման հարաբերություններ կարգավորող իրավական նորմերը (օրենքի անալոգիա)։(...)։*

3. Օրենքի կամ իրավունքի անալոգիա չի կարող կիրառվել, եթե դրանով սահմանափակվում են անձանց իրավունքները, ազատությունները, կամ նրանց համար նախատեսվում է նոր պարտականություն կամ պատասխանատվություն, կամ խստացվում են նրանց նկատմամբ կիրառվող պատասխանատվության, հարկադրանքի միջոցները կամ դրանց կիրառման կարգը, հարկերի, տուրքերի և այլ պարտադիր վճարների վճարման կարգը, անձանց գործունեության նկատմամբ հսկողություն ու վերահսկողություն իրականացնելու պայմանները և կարգը։

4. Օրենքի անալոգիան և իրավունքի անալոգիան կարող են կիրառվել միայն, եթե տվյալ օրենքով չի արգելվում անալոգիայի կիրառումը»։

14. Նշված նորմերի համակարգային վերլուծությունից հետևում է, որ «ՀՀ քրեական օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» 2024 թվականի հունվարի 16-ին ընդունված ՀՕ-31-Ն ՀՀ օրենքով կատարված փոփոխությունների արդյունքում ՀՀ քրեական օրենսգրքի 296-րդ հոդվածի (համապատասխանում է 2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 190-րդ հոդվածին) 3-րդ մասի 1-ին և 3-րդ կետերը՝ փողերի լվացումը, որը չի կատարվել *«իշխանական կամ ծառայողական լիազորությունները կամ դրանցով պայմանավորված ազդեցությունն օգտագործելու»* եղանակով այլևս չեն հանդիսանում կոռուպցիոն բնույթի հանցանքներ և ընդգրկված չեն ՀՀ քրեական օրենսգրքի հավելված N 1-ում, հետևաբար դրանց վերաբերյալ վարույթներն ընդդատյա են առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանին: Սակայն, կատարված փոփոխությամբ որևէ կարգավորում չի սահմանվել առ այն, թե արդյո՞ք

այդ փոփոխությունը պետք է տարածվի Հակակոռուպցիոն դատարանում դատաքննության փուլում գտնվող նմանատիպ վարույթների վրա, այլ կերպ՝ արդյո՞ք այդ վարույթները ենթակա են վերաբաշխման, թե ոչ:

Այդուհանդերձ, դեռևս 2021 թվականի ապրիլի 14-ին ընդունված «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՕ-331-Ն ՀՀ սահմանադրական օրենքի 19-րդ հոդվածի 23-րդ և 24-րդ մասերով, ինչպես նաև «Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 2021 թվականի ապրիլի 14-ին ընդունված ՀՕ-333-Ն օրենքի 7-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանվել է, որ ՀՀ առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանների վարույթում գտնվող կոռուպցիոն հանցագործությունների վերաբերյալ այն գործերը, որոնցով **անցում է կատարվել դատաքննության փուլ, ենթակա չեն վերաբաշխման հակակոռուպցիոն դատարանին:** Այսինքն, «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՕ-331-Ն ՀՀ սահմանադրական օրենքով, ինչպես նաև «Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՕ-333-Ն օրենքով լուծում է տրվել համանման իրավահարաբերությանը, ըստ որի՝ դատաքննության փուլ անցում կատարված լինելու դեպքում առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի վարույթում գտնվող վարույթի փոխանցումը Հակակոռուպցիոն դատարան իրավաչափ չէ:

14.1. Հաշվի առնելով, որ ինչպես «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքը, այնպես էլ ՀՀ քրեական դատավարության օրենսգիրքը չեն արգելում անալոգիայի կիրառումը, ինչպես նաև այն, որ տվյալ պարագայում անալոգիայի կիրառումն անձանց իրավունքները, ազատությունները չի սահմանափակում կամ նրանց համար նոր պարտականություն կամ պատասխանատվություն չի նախատեսում՝ գտնում ենք, որ Հակակոռուպցիոն

դատարանների վարույթում գտնվող՝ «ՀՀ քրեական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 2024 թվականի հունվարի 16-ի թիվ ՀՕ-31-Ն ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի հիման վրա առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարաններին ընդդատյա վարույթների վերաբաշխման հարցը պետք է լուծվի ««Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՕ-331-Ն օրենքի 19-րդ հոդվածի 23-րդ և 24-րդ մասերին և «Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՕ-333-Ն օրենքի 7-րդ հոդվածի 2-րդ մասին համահունչ: Այլ կերպ՝ այն վարույթները, որոնցով Հակակոռուպցիոն դատարանն անցում է կատարել դատաքննության (հիմնական դատալսումների) փուլ, ենթակա չեն վերաբաշխման առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանին:

15. Սույն վարույթի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ՝

- Հակակոռուպցիոն դատարանը 2023 թվականի նոյեմբերի 7-ին կայացած դատական նիստի ընթացքում անցում է կատարել դատաքննության փուլ[9]:

- Հակակոռուպցիոն դատարանը որոշում է կայացրել վարույթն ըստ ընդդատության Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարան ուղարկելու մասին՝ փաստելով, որ Արմեն Խաչատրյանը և Լյովա Առաքելյանը մեղսագրվող ենթադրյալ արարքները չեն կատարել *«իշխանական կամ ծառայողական լիազորությունները կամ դրանցով պայմանավորված ազդեցությունն օգտագործելու»* եղանակով[10]:

- Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանն արձանագրելով, որ թիվ ԵԴ/1571/01/21 (ՀԿԴ/0017/01/23) քրեական գործով Հակակոռուպցիոն դատարանը ացնում է կատարել դատաքննության փուլ՝ գտել է, որ քրեական գործը ենթակա չէր վերաբաշխման առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանին:

---

[9] Տե՛ս քրեական վարույթ, հատոր 15, թերթեր 176-179:
[10] Տե՛ս սույն որոշման 5-րդ կետը:

Միաժամանակ, փաստել է նաև, որ Հակակոռուպցիոն դատարանը գործն ըստ առարկայական ընդդատության ուղարկելու մասին որոշում չէր կարող կայացնել քանի որ ընդդատության կանոնների պահպանմամբ վարույթ ընդունված քրեական գործի ընդդատությունը չի կարող փոխվել՝ ելնելով քրեական վարույթի ընթացքում հետագա օրենսդրական փոփոխություններից[11]:

16. Նախորդ կետում մեջբերված փաստական հանգամանքները գնահատելով սույն որոշմամբ վկայակոչված իրավադրույթների և արտահայտված իրավական դիրքորոշումների լույսի ներքո՝ պետք է փաստել, որ ««Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՕ-331-Ն ՀՀ սահմանադրական օրենքով և «Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՕ-333-Ն օրենքով նախատեսված իրավակարգավորումների լույսի ներքո, թիվ ԵԴ/1571/01/21 (ՀԿԴ/0017/01/23) քրեական վարույթը ենթակա չէր վերաբաշխման առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանին, քանի որ սույն վարույթով Հակակոռուպցիոն դատարանն անցում է կատարել դատաքննության փուլ:

17. Վերոշարադրյալը հիմք է տալիս փաստելու, որ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանի հետևությունն այն մասին, որ թիվ ԵԴ/1571/01/21 (ՀԿԴ/0017/01/23) քրեական վարույթը ենթակա չէր փոխանցման առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան, հիմնավոր է:

Միաժամանակ հարկ է արձանագրել, որ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանի այն դատողությունը, որ ընդդատության կանոնների պահպանմամբ վարույթ ընդունված քրեական գործի ընդդատությունը չի կարող փոխվել՝ ելնելով քրեական վարույթի ընթացքում հետագա օրենսդրական փոփոխություններից, ընդունելի չէ:

---

[11] Տե՛ս սույն որոշման 6-րդ կետը:

18. Վերոգրյալի հիման վրա, ինչպես նաև ելնելով արդարադատության շահի պաշտպանության և վարույթի արդարացիության ապահովման՝ ողջամիտ ժամկետում քննության անհրաժեշտությունից, գտնում ենք, որ թիվ ԵԴ/1571/01/21 (ՀԿԴ/0017/01/23) քրեական վարույթն ընդդատյա է Հակակոռուպցիոն դատարանին:

Ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 263-րդ հոդվածի 8-րդ մասով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի Ն Ք

Տիգրան Համբարձումի Պետրոսյանի վերաբերյալ 2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով և 325-րդ հոդվածի 1-ին մասով, Արմեն Ռոբերտի Խաչատրյանի վերաբերյալ 2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 38-178-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով, 190-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով, 325-րդ հոդվածի 2-րդ մասով և Լյովա Ռուբենի Առաքելյանի վերաբերյալ 2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 38-190-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով, 325-րդ հոդվածի 2-րդ մասով թիվ ԵԴ/1571/01/21 (ՀԿԴ/0017/01/23) քրեական վարույթն ընդդատյա է Հակակոռուպցիոն դատարանին:

ՀՀ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ ՆԱԽԱԳԱՀ ԼԻԼԻԹ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ	ՀՀ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ ՔՐԵԱԿԱՆ ՊԱԼԱՏԻ ՆԱԽԱԳԱՀԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ ԱՐԹՈՒՐ ՊՈՂՈՍՅԱՆ	ՀՀ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ՊԱԼԱՏԻ ՆԱԽԱԳԱՀ ԱՐԹՈՒՐ ԴԱՎԹՅԱՆ